

և միայն Նորա մօտ կեանք որսնել տալիս որ  
միակ կենդանին է և կենդանաբար՝ Յարու-  
ցեալ Քրիստոս:— Եւ մենք սողում ենք գետ-  
նի երեսին և գետի վեր, գետի անմահու-  
թեան Արեգակը նայել չկարողանալով՝ ցած  
ենք նայում: այդտեղ, ամենակուլ ոչնչութեան  
մասյլ զրկի մէջ կենդանութիւն որսնում—  
և կասկածում ենք, մեր փաքրիկ ուղեղով  
ժխտում ու հեղնում, թէ մի ուրիշ վսեմ  
կեանք կայ մի կենդանութեան Արեւ կայ  
վերե... Բայց Քրիստոսի եկեղեցին չի կաս-  
կածում: Հաւատոյ անշարժ հիմքն վերայ  
հաստատուած եկեղեցին հարիւր հաղարների  
բերանով կանչում ու քարոզում է, ի սփիռս  
աշխարհի՝ այսօր ինչպէս դարեր առաջ, ինչ-  
պէս յաւիտեան: Քրիստոս յարեաւ, ա-  
լէլուիա... Քրիստոս Քրիստոս յարեաւ,  
ալէլուիա:



### ՑԻՍՈՒՄ ՄԱՀԱԿԱՆ ՀԱՆԴիՊ.

**Ք**րիստոնեայ աշխարհը չունի աւել-  
ի թանկագին մի գանձ, քան եթէ Յիսուսի  
պատկերը այն շարաթուայ ընթացքում երր  
Նա գեմ առ գեմ կանգնած էր մահուան ա-  
ռաջ: Անօահման մեծ է եղել Նա ամեն ժա-  
մանակ, բայց թող ներուի ամենայն պատկա-  
ռանօք ասել երբէք այնչափ մեծ, որչափ այս  
սոսկալի անձկութեան օրերում: Ամենազօրեղ  
և ամենաքնքոյց, ամենաստուածային և ա-  
մենամարդկային գծերը Նորա բնութեան հը-  
րապարակ են ելնում այստեղ, ինչպէս առաջ  
երբէք չեն ելեր:

Երուսաղէմ եկաւ Նա կատարելա-  
պէս համոզուած, որ պէտք է մեռնի: Մի  
ամբողջ տարի այդ իրողութիւնը շարունակ  
Նորա աշքի առաջ էր եղել, և վերջապէս  
վրայ հասաւ այս, ինչ որ վաղուց նախատե-  
սուած էր: Նա դիտեր, որ իւր չօր կամքն  
էր այդ, և երբ ժամն եկաւ՝ վեհ հաստա-  
մութեամբ ուղղեց քողլերը գետի օր-  
հասական վայրը: Արդարե առանց ներքին  
բուռն մաքառման չեղաւ այդ, միմեանց հա-

կագիր յոյզեր՝ անձուկ և ոգեսրութիւն, եր-  
կարատե ամենազգառն թափիծ, յաղթական  
ցնծութիւն և ամենավսեմ խաղաղութիւն  
փոխէփոխ յաջորդում էին Նորա հոգւոյ մէջ,  
ինչպէս լայնատարած ովկիանոսի զայրագին  
կոհակներն ու մեզմ ալիքը:

Յատերը գժուարացել են Յիսու-  
սին այն բնական տագնապը վերագրել, որ մարդ  
ունենում է մահուան առաջ, բայց անշուշտ  
անհիմն տեղը: Այդպիսի տագնապը մի բոլո-  
րովին անմեղ զգացումն է, որ գուցէ և աւելի  
զօրեղ էր Նորա քան մեր մէջ. որովհե-  
տե Նորա մարմնական կազմուածքն անարատ  
էր և կատարեալ: Պէտք է շմոռանալ, թէ  
որչափ երիտասարդ էր Նա՝ հազիւ երեսուն  
և երեք տարեկան: Կեանքը բոլոր ուժով ե-  
ռում էր Նորա մէջ, գործելու տենչով լի էր  
Նա: Սպանել այդ եռանդը, մահուան ստոն  
գրկի մէջ թաղել կեանքի լոյսն ու ջերմու-  
թիւնը՝ պէտք է անշափ գէմ լինէր Նորա  
ներքին մղման: Երկուշարթի օր պատահած  
մի գետք սաստիկ յուղեց Նորա մէջ այդ  
կսկածալի բնազգումը: Ինչ որ, տօնի համար  
եկած, հեթանոսներ երկու առաքեալների մի-  
ջոցաւ ցանկութիւն յայտնեցին՝ մի տեսակ-  
ցութիւն ունենալ Նորա հետ: Այդ ժամա-  
նակ շատ հեթանոսներ կային ընդարձակա-  
ծաւալ յունախօս աշխարհի զանազան կող-  
մերում որոնք, տիրող անաստուածութիւնից  
և զզուելի անբարոյականութիւնից խոյս տա-  
լով՝ իրենց մէջ բնակուած հրէաների կրօնին  
էին ապահնում և այդպէս ինչհօփայի պաշ-  
տօնեաններ դառնում: Այդ կարգին էին պատ-  
կանում երեխ նաև եկողները: Բայց նոցա-  
խնդիրը այնպիսի մտքեր յառաջ բերաւ Յի-  
սուսի մէջ, որոնց մասին նոքա չէին երազել  
անզամ: Ինչպէս երեսում է Նա իւր ամբողջ  
գործունելութեան ընթացքում միայն՝ երկու  
երեք անգամ էր շփուել իւր երկրից զուրս  
գանուող աշխարհի ներկայացուցիչների հետ-  
Նա ուղարկուած էր հարայէլի կորած ոչխար-  
ների համար: Սակայն իւրաքանչիւր անզամ,  
երբ Նա հեթանոսների հետ գործ էր ունե-  
ցել այնպիսի հաւատ, պատրաստակամութիւն  
և աղինիւ վարմունք էր տեսել, որ ինքն իսկ  
հրէաների անհաւատութեան, կոպտութեան և

գծուծ բարքի հետ համեմտաելով՝ հակադիր էր գանում։ Ո՞քչափ զօրեղ պէտք է լինէր Նորա մէջ փափազը՝ Պաղեսամինի ստհմաններըն անցնել և այսպիսի պարզ ու ազնիւթնաւորութեան տէր ազգերի այցելել։ Նորա հոգու առաջ շատ անգամ՝ պէտք է պատկերացած լինի գործունէութեան այն առաջարեզը, որ յետոյ Պօղոս անցաւ՝ երկրէ երկիր տանելով և արեմուտքի զիմաւոր կենդրուներում քարոզելով փրկութեան աւեարանը։ Ինչպիսի ուրախութիւն պատճառած կլինէր իրեն Յիսուսին, եթէ կարողանար այդ ասպարիզի վերայ ոռք դնել։ Նորա անսահման սիրոյն և մեծ եռանդին ինչպէս համապատասխան կլինէր այգօրինակ գործունէութիւնը։ Յիշեալ հիմանուների այցելութիւնը այդպիսի մտածմունքների մի մեծ յորձանքով ուզողեց անշուշտ Նորա հոգին։ Փօխանակ նոցա խնդիրն ուշադրութեան առնելով՝ ինքն իւր մէջ խորասուզուեց Նա։ Նորա գէմքը մասյլեց և ներքին յուզումից սարսեց ամբողջ կազմուածքը։ Սակայն շուտով մողովեց Նա իրեն և ընթացք տուաւ այն մտածմունքներին, որոնցով վերջին օրերս զօրացնում էր իւր հոգին։ Եթէ ցորենի հատը հոգի մէջ ընկնելով շմեսնի՝ ինքը միայն կմնայ, իսկ եթէ մեռնի՝ շատ արգիւնք կրերէ։ Ես ևս երրոր բարձրանամ երկրի վերայից, բոլորին կը ձգեմ ինձ մօտ։ Որքան սոսկալի ու ձնշող լինէր մահուան գաղափարը՝ Նորա հայեացքը գերեզմանի միւս կողմն էր թափանցում և Նա վստահ էր, որ իւր անձնազութեան թռագած ազգեցութիւնն անշափ աւելի մեծ պէտք է լինի, քան թէ անձնապէս քարոզելով հեթանոսաց մէջ երբեկցէ ազգել կարող էր։ Յամենայն գէպս մահ էր որշուած Նորա համար իւր չօր կողմից։ Այդ էր վերջին և ամենամեծ միսիթարութիւնը, որով Նա այժմ ինչպէս և ուրիշ անգամ նման գէպքերում, սփոփում էր իւր հիգութեամբ և վստահութեամբ լի սիրտը։ Այժմ իմ հոգին վրդովուած է, և ինչ ասեմ։ Հայր, ազատիր ինձ այս ժամկց։ Սակայն դորա համար եկայ այս ժամին։ Հայր, փառաւորիր Քո անունը։

Մահը մօտեցաւ Յիսուսին ամեն տեսակ սարսափների ուզելովութեամբ։ Նա պէտք

է զոհ զնար իւր հետեւողներից մէկի մատնութեան, որին ինքն ընտրել և սիրել էր։ Իւր սիփական ազգը պէտք է խլէր Նորա կեանքը, իւր սրտին ամենամօտ քաղաքում։ Նա յայտնուել էր՝ իւր ժողովրդին մինչև երկինք բարձրացնելուց համար, և սիրել նորան անձնուել սիրով ամենալուրջ և ամենասրեւուանցըն աշխատութեամբ ծանօթացած լինելով Նորա անցեալին և այն մարդոց պատմութեան, որոնք նոյնպէս սիրել էին այդ ժողովուրդին, այլև ունենալով նախազգացումն այն ամենի, ինչ որ ինքը պէտք է յանձն առնելը Նորա համար։ Եւ սակայն իւր մահը հազար անէծք պէտք է բերէր Պաղեսամինի և երուասղէմի վերայ։ Թէ ինչպէս պարզ կերպով տեսնում էր Նա զալիքը՝ ցոյց են տալիս Մատթ. ԷՂ. զլուխ բերուած մարզարէական խօսքերը, որ Նա առաց երեքարթի ճաշից յետոյ իւր աշակերտներին՝ Զիթենեաց լերան կողի վերայ նստած, գատապարտեալ քաղաքը ուքերի տակ։ Իսկ թէ ինչպիսի կսկիծ էր պատճառում Նորան այս տեսքը, երեւ արգելն կիւրակէ, օրը՝ յաղթանակի այն ժամին, երբ ոգեօրուած ամրոխը Նորան լեառն ի վայր տանում էր։ Նա կանգ առաւ այն տեղը, ուր քաղաքը միանգամից բացուում էր աշքի առաջ, և ողբ ու արտասուքով նորա օրհասը գուշակեց։ Երուսաղէմի հարսանեաց օրը պէտք է լինել այդ օրը, երբ նորա մօտ էր գալիս Աստուծոյ Որդին՝ իւր փեսան, բայց մահուան գժգութեամբ էր պատել Նորա գէմքը։ Նա, որ այդ երուսաղէմն այնպէս գգուել կկամենար, ինչպէս հաւը իւր ձագերին թեւերի տակ է ժողովում, տեսնում էր արգելն արծիւներին օդի մէջ սաւառնելին՝ պատրաստ նորան պատառ պատառ անելու։

Այդ շաբաթ Նա երեկոները թիւթանիս էր գնում հաւանականարար զիշերներն անց էր կացնում մեծ մասամբ տռանձնացած, գուրսը։ Մենակ պատում էր Նա բլուրի գագաթին կամ այն ձիթենեաց ծառասաններում և պարտէզներում որոնցով պատած էին նորա կողերը։ Յաձախ երեկի իշնում էր Նա այն ճանապարհով, որով անցել էր մի քանի օր առաջ հանգիստուոր գնացքը, և ելլր այն կէտից, ուր կտնկ էր առել, նայում էր

ձորնի վայր՝ դէպի լուսնի լուսոյ մէջ նիրհող քազարը — ընդհատում էր զիշերային լուս թիւնը դառն ոյրերով, աւելի դառն, քան այն «վայ»-երը, որոնք սարսափեցրել էին ամբոխին, բայց և կրկնում էր անշուշտ որտի խորքում այն մեծ ջմարտութիւնները, որ արտասանել էր չեթանոսների ներկայացած միջոցին:

Սոսկալի էր Սորա միայնութիւնը: Ամրոգջ աշխարհը Սորա գէմ էր. Երուսաղէմը կատաղի ասելութեամբ Սորա արինն էր խնդրում. գաւառացի հազարաւոր ամբոխը հիմաժափուած Մջել էր երեսը Սորանից: Ոչ մէկը հւր աշակերտներից, և ոչ իսկ Յովհաննէսը, գաղափար ունիր օրհասական դրսթեան մասին կամ ընդունակ էր մասնակից լինել Սորա մասածմոնքներին: Ամենազառն կաթին էր այդ ոյն բաժակի մէջ, որ Սա պէտք է ըմպէր: Սա կարիք էր զգում, ինչպիս ոչ ոք զգացել է երբէք, մահից յետոյ ևս աշխարհի վերայ առլելու: Այն գործը, որ Սա սկսել էր, պէտք է չմեսնէր: Բոլոր աշխարհի համար էր այն և պէտք է սերունդէ սերունդ անցնէր, երկրագունակի բոլոր կողմերը թափանցէր: Բայց հւր մեխելուց յետոյ աշակերտների ձեռին պէտք է մասր այդ դործը, որոնք այժմ այնչափ թոյլ էին, անսիրտ և աղէտ: Ընդունակ պէտք է լինեն նոքա այդ կոչումն ի զլուխ հանելու: Զէ՞ որ նոցանից մէկն արդէն մասնիչ էր զարձել: Միթէ Սորա գործը, Սորա հեռանալուց յետոյ՝ այլպէս էր երեխ շշնջում Փօրձիլը — պէտք է չոչչանար և աշխարհի վերածնութեան համար կազմած հեռաւոր ծրագիրները յօդս ցնդէին, ինչպէս երեակայութեան մի անժիմն կերտուածք:

Եւ սակայն մենակ չէր Սա: Պարտէզի մութ ստուերների ներբեց և Զիթենեաց լերան բարձունքներում Սա օրոնում էր այն անսպառ աղբիւրը, որ կազզուրել էր իրեն պակաս թափալի օրերում և կազզուրել կարող էր նաև այս սոսկալի անձկութեան մէջ: Սորա Հայրն հւր հետ էր և աղաչանք ու պաղատաճք նուել բերելով՝ ուժդիմն ձայնիւ և արտասուօք ... լսելի եղու տաղնապի միջից» (Երբ. Եծ.): Սա սփոփում էր իրեն այն մասձմռնքով որ հւր Հօր կատարեալ սէրն ու

իմաստութիւնն են անօրինել այն ամէնը, ինչ որ պէտք է հանդիպէր իրեն, և որ այդպիսով հւր Հօրն էր փառաւորում և զլուխ հանում իրեն յանձնած գործը: Այդ կարող էր ցրուել ամեն երկիւղ և լեցնել Սորան անձառնելի ու ամենավսեմ ուրախութեամբ:

Վերջապէս վախճանը մօտենում էր: Եկաւ հինգչարթի երեկոն, երբ Սրուսաղէմում իւրաքանչիւր տան պատէքի զառն էին ճաշակում: Սա ևս տասներկու աշակերտներով սեղան նստաւ, պատէքի վայելելու: Սա զիտէր, որ այդ հւր վերջին զիշերն էր երկրի վերայ՝ հրաժեշափ հացկերոյթը հւրայինների հետ: Սորա կեանքի ամենանշանաւոր երեկոն էր այդ Սորա հոգին ծփում էր աննկարագրելի քնըըշութեամբ և վիհութեամբ: Յիբաւի երեկոյթի սկզբում ինչ ինչ ստուերներ ընկան սցդ պայծառութեան վերայ, բայց շուտով տեղի տուին, և ունալուայի, ճաշակման, հաղորդութեան խորհուրդի հաստատութեան, հրաժեշտի խօսքերի և քահանացապետական աղօթքի միջոցին հանգէստերաւ Սա հւր բարձր էութեան բոլոր փառքը: Կատարելապէս անձնատուր էր եղել Սա բարեկամական զգացումներին՝ զէպի հւրայիններն ունեցած սիրուն, որ սահման չուներ, և կարծես մռացած նոցա բոլոր թերութիւնները՝ զուարձանում էր նոցա ապագայ յաջողութիւններով, և հւր զատի յաղթանակը նախատեսելով: Ո՛չ մի ստուեր չէր սքուզում այլէս Սորա գէպի հւր Հայրն ուղղած հայեցքը և չէր սղլատում այն գոհունակութիւնը, որով զիտում էր հւր կատարման կէտին հասած գործը: Կարծես չարչարտնքն արգէն անցել էր և յարութեան փառքը փայլակում էր հւր շուրջ:

Սակայն շուտով տաղնապի ժամն ևս հասաւ: Կէս զիշերին սեղանից ելնելով՝ նոքա անցան Ելուսաղէմի փողոցները, արեւելեան գռնից գուրս ելան և զիմեցին զէպի կէղընի ձորի միւս կողմը, Զիթենեաց լերան ստորոտում զանուող մի շատ ծանօթ տեղ՝ Դիթսեմանի պարաւզը: Այդտեղ տեղի ունեցաւ այն զարհութելի, այն անմռաց մաքառումը: Վերջին ճնշումն էր դա զա այն թափանակի միջութեան, որի գէմ կուի էր վարել ամրող շարաթուայ ընթացքում Սորա առ Հայրն

ունեցած ուրախական վասահութիւնը և ընթրիքի միջոցին իւր գաղաթնակետին հասել։ Այդ վերջին ճիզն էր փորձութեան, որից Նա աղատ չէր եղել երբէք կեանքում Բայց մենք պատկառում ենք այդ վսեմ բոպէն մանրամասն քննելուց։ Մենք գիտենք, որ մեր լեզուն բառեր չունի նորա խորհուրդը բացարելու համար։ Եւ ինչպէս կարող ենք մենք ամենափոքր չափով իսկ զգալ և գնահատել այն, որ գլխաւոր կէտն էր այդտեղ՝ ամբողջ աշխարհի Նորա վերայ ծանրացող մեղքի ճնշումը որ պէտք է քաւէր Նա։

Սակայն մաքառումը կատարեալ յաղթութեամբ վերջացաւ, Մինչեւ թշուառ աշակերտները քնով էին անցրել գալիք օրհասի նախապատրաստութեան ժամը, Նա ինքը բոլորովին կազմ ու պատրաստ էր։ Նա յաղթել էր փորձութեան վերջին խլառումներին, անցրել մահուան դառնութիւնը, և կարող էր այժմ յառաջ քայլել բոլոր պատահարների հանգէպ՝ անվրդով խաղաղութեամբ և այնպիսի վեհ արժանաւորութեամբ, որ Նորա չարչարանքն ու խաչելութիւնը մարդկային աղքի պարձանքն է դարձում։ \*



## ՅԻՍՈՒՍ ՀԱՆԳՈՒՑԻ ՑԻ.

Եկայի առ իս ամենայն վասակեայի եւ թիւնաւորի, եւ ես հանդուցից զնեց առէք զրուծ իմ ի ձեզ եւ ուսարով յինքն, զի հեզ եօ եւ խնամքի սրիւ, եւ զայի համզիս անձանց մերց, զի լուծ իմ բաղր է, եւ թեն իօ փորողի։

Մատք. ԺԱ. 29—30.

**Մ**եր կեանքի զրեթէ բոլոր կարևոր հանգամանքներում մենք եկեղեցի ենք դիմում, եկեղեցւոյ սրբազն խորհուրդներով նուիրագործում մեր արարքը, եթէ վշաի և նեղութեան մեջ ենք՝ եկեղեցւոյ բեր կամ կանչում մեղմ հոգիապարար, երկնային ներգաշնակութեամբ հնչող ձայն, աշխարհի Փրկչի հանգուցիչ ձայնը՝ Եկայիք առ իս, Եկ և զու, Եկէք ամէնքդ, որ հոգեկան ցաւերի բեռան տակ Ճնշուած էք և վասակած, Նա ձեզ կոսփորեցնեմ, թէ ուր պէտք է հանգիստ ու թեթեռութիւն գանեք, ցոյց կտամապամէ ինչպէս կգտնէք ձեր հանգամատութիւնը, կրացատիմ նաև զաղանիքն այն ամենաբուժ զեղի, որ ձեր ցաւերը միշտ ամոքել կարող է և թոյլ չտալ որ նոքա տեղ ու ճարակ գտնեն ձեր սրտում.. Եկայիք առ իս... .

\* Թարգմ. Rev. J. Stalker, The Life of Jesus Christ գրքից. տես. Արարտ, փետր. 1898 թ.

զութեան մէջ՝ ուղիղ, աստուածահանց ընթացք տալ մեր զգացումներին ու մաքերին, ամբարտաւանութիւնից հեռու պահել ամեն բարիք իբրև Աստուծոյ կողմից անարժանապէս ընդունած պարզե նկատելու և ամենայն երկիւ զածութեամբ զոհանալու վարժեցնել։ Սակայն ամեն դէպքում մենք հաւասար կերպ պով չենք կարիք զգում եկեղեցի զիմելու և Աստուծոյ խօսքը լսելու, շատ անգամ կրաւականանք գուցէ կեանքի սովորական կանոններով և սփոփանք ու քաջալիքութիւն մեր անմիջական շրջապատի մէջ կդանենք. մի վիճակ կայ յամենայն դէպս, ուր մեր շրջապատը և նորա հետ ունեցած ոչ մի երկրաւոր կազմ մեր ներքին պահանջներին բաւականութիւն տալ չէ կարող:—Երբ մի ահազին հոգս մեր սրտի վերայ ծանրանում է կամ այնպիսի դառնութիւն համակում նորանց որ մեր ձեռքից իսկ փախչել ծովը նետուել կամ օդի մէջ կախուել կկամենացինք, որ մեր վերքը ոչ ոքի առաջ բանալու հնարաւորութիւն չունինք՝ չենք տեսնում ոչ մի բժիշկ, որ նորա մէջ թագնուած ցաւը հասկանար, վրան սպեղանի գնելու, կամ կարել հանելու հնարըն իմանար . . . տագնապի այդ ժամին երբ մենք վանդակի մէջ փակուած առիւծի նման զայրանումն կամ ծուզակին ընկած անզօր թռչնակի նման կծկուում ենք, վհատում և մէկը չկայ, որ մեզ աղատութիւն հանգիստ շնորհէ, մեր հոգու վերայ ծանրացող անտանելի բեռը բառայ՝ ս. Եկեղեցւոյ բեմի վերայից իւր մօտ է կանչում մի մեղմ հոգիապարար, երկնային ներգաշնակութեամբ հնչող ձայն, աշխարհի Փրկչի հանգուցիչ ձայնը՝ Եկայիք առ իս, Եկ և զու, Եկէք ամէնքդ, որ հոգեկան ցաւերի բեռան տակ Ճնշուած էք և վասակած, Նա ձեզ կոսփորեցնեմ, թէ ուր պէտք է հանգիստ ու թեթեռութիւն գանեք, ցոյց կտամապամէ ինչպէս կգտնէք ձեր հանգամատութիւնը, կրացատիմ նաև զաղանիքն այն ամենաբուժ զեղի, որ ձեր ցաւերը միշտ ամոքել կարող է և թոյլ չտալ որ նոքա տեղ ու ճարակ գտնեն ձեր սրտում.. Եկայիք առ իս... .

Այսու ուրիշ ուրի, եթէ ոչ Նորա մօտ միայն, որ ամենաբուկս բժիշկն է բոլոր հի-